ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ, ԵՐԵՎԱՆԻ Ն. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 14 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ, ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ-ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆԻ, ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 17 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ N2 ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՆԵՐ) ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 3 ՆԻՍՏԻ

Հատուկ դպրոցների կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի (այսուհետ՝ նաև Խորհուրդ) նիստին մասնակցում էին կառավարման 13 անդամներից 10-ը՝ **Հայկուհի Ադամյանը, Համեստ Փիրումյանը, Անահիտ Մուրադյանը, Իրինա Պոնոմարենկոն, Աննա Պողոսյանը, Քրիստինա Խաչատրյանը, Արմինե Փափազյանը, Մարինե Բաղդասարյանը, Լուսինե Կարապետյանը և Սաթենիկ Վարդումյանը:** Բացակայում էին կառավարման մարմնի խորհրդի 3 անդամ՝ **Ելենա Հարությունյանը, Քրիստինե Սիմոնյանը և Աննա Սահրադյանը**:

Խորհրդի նիստը կայացել է առցանց ձևաչափով:

Նախքան օրակարգային հարցերին անցնելը՝ Խորհրդի նախագահ Հ. Ադամյանը Խորհրդի քննարկմանը ներկայացրեց հերթական նիստի օրակարգի նախագիծը, որը նախապես ուղարկվել էր Խորհրդի անդամներին՝ ծանոթանալու նպատակով:

Ա. Մուրադյանը նշեց, որ Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի մասնագիտական (արհեստագործական) կրթության բաղադրիչին վերաբերող հարցերի մասով ունի վերապահում՝ կապված այդ հարցերի՝ Խորհրդի լիազորությունների շրջանակում լինելու հետ, և այդ հիմնավորմամբ օրակարգի նախագծի քվեարկության ժամանակ ձեռնպահ է մնում:

Հ. Ադամյանը, անդրադառնալով Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով ընդունելության արդյունքների և ուսման վարձի չափի վերաբերյալ օրակարգային հարցերին, տեղեկացրեց, որ հարցը նախապես քննարկել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Մասնագիտական կրթության և ուսուցման վարչության պետ Գայանե Արզումանյանի հետ: Նա նշեց, որ, հաշվի առնելով, որ Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրը ներկայումս դեռևս չունի հաստատված նոր կանոնադրություն, որով կկարգավորվեն նաև մասնագիտական (արհեստագործական) կրթության բաղադրիչին վերաբերող կառավարման հարցերը, ինչպես նաև այդ բաղադրիչի մասով ձևավորված այլ կառավարման խորհուրդ առկա չէ, նախարարության կողմից առաջարկվել է նշված հարցերն այս փուլում ներկայացնել գործող Խորհրդի քննարկմանը:

Հ. Ադամյանը նշեց, որ, հաշվի առնելով կրթահամալիրի կողմից առաջարկված օրակարգային հարցերը, առաջարկում է Խորհրդին լսել կրթահամալիրի կողմից ներկայացվող տեղեկատվությունն ու առաջարկությունը: Հաշվի առնելով նաև, որ Խորհուրդը ձևավորվել և

գործում է ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» և «Հայաստանի Հանրապետության հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների օրինակելի կանոնադրություններով սահմանված կառավարման կարգավորումների շրջանակում, առաջարկեց կրթահամալիրին՝ ուսանողների ուսման վարձի չափի վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել լիազոր մարմնին՝ համապատասխան որոշում ընդունելու համար:

Տեղի ունեցավ կարծիքների փոխանակում և քննարկում, որից հետո Խորհրդի անդամները **ԿՈՂՄ՝ 9, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 1 ձայների հարաբերակցությամբ** հավանություն տվեցին օրակարգային հարցերին:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Հատուկ դպրոցների 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպական կառուցվածքների հաստատում** (զեկուցողներ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա. Ենգիբարյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի տնօրեն՝ Ա. Բաբայան, Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս. Դավթյան, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ա. Գարեգինյան):
2. **Հատուկ դպրոցի ներքին կարգապահական կանոնների հաստատում** (զեկուցողներ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա. Ենգիբարյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց- ռեսուրս կենտրոնի տնօրեն՝ Ա. Բաբայան):
3. **Հատուկ դպրոցների՝ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգերում փոփոխությունների հաստատում՝ օրինակելի կարգում կատարված փոփոխություններին համապատասխան** (զեկուցողներ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա. Ենգիբարյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի տնօրեն՝ Ա. Բաբայան, Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս. Դավթյան, Երևանի թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ա. Գարեգինյան):
4. **Հատուկ դպրոցների 2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքների քննարկում** (զեկուցողներ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա. Ենգիբարյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի տնօրեն՝ Ա. Բաբայան, Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս. Դավթյան, Երևանի թիվ 17

հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ա. Գարեգինյան):

5. **Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի 2026–2027 ուսումնական տարվա մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով ընդունելության արդյունքների ներկայացում** (զեկուցող՝ Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի տնօրենի ժ/պ՝ Հ. Առաքելյան):
6. **Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրում ուսման վարձի չափի վերաբերյալ առաջարկության ներկայացում** (զեկուցող՝ Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի տնօրենի ժ/պ՝ Հ. Առաքելյան):
7. **Ընթացիկ հարցեր**

<u>1-ին հարցի վերաբերյալ՝</u>

Լսեցին

1. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Անի Գարեգինյանին
2. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Անահիտ Ենգիբարյանին
3. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի տնօրեն՝ Արմինե Բաբայանին
4. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս. Դավթյանին

Խորհրդի համապատասխան օրակարգով Խորհրդի նիստի ընթացքում լսեցին հատուկ դպրոցների տնօրեններին, որոնք ներկայացրեցին 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպական կառուցվածքները՝ անդրադառնալով նախորդ ուսումնական տարվա համեմատ կատարված փոփոխություններին և դրանց հիմնավորումներին:

Արտահայտվեցին

Հ. Ադամյանը նշեց, որ կազմակերպական կառուցվածքները նախապես ուղարկվել են Խորհրդի անդամներին՝ ուսումնասիրության համար: Հաշվի առնելով, որ հաստատությունների կազմակերպական կառուցվածքներում կատարված մի շարք փոփոխություններ նույնաբովանդակ են, առաջարկվեց չկրկնել նույն տեղեկատվությունը յուրաքանչյուր հաստատության մասով և ներկայացնել հիմնականում առկա տարբերություններն ու առանձնահատկությունները:

Խորհրդի անդամները քննարկեցին ներկայացված

կազմակերպական կառուցվածքները, որից հետո յուրաքանչյուր ուսումնական հաստատության համար տեղի ունեցավ բաց քվեարկություն:

Քվեարկության արդյունքներով՝ **ԿՈՂՄ՝ 10, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0:**

Որոշեցին Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 3-րդ ենթակետով և N 4 հավելվածով հաստատված «Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 42-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Խորհուրդը

Որոշեց.

1. Հաստատել Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպական կառուցվածքը:
2. Հաստատել Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպական կառուցվածքը:
3. Հաստատել Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպական կառուցվածքը:
4. Հաստատել Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպական կառուցվածքը:

<u>2-րդ հարցի վերաբերյալ՝</u>

Լսեցին

1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Անահիտ Ենգիբարյանին
2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի տնօրեն՝ Արմինե Բաբայանին

Օրակարգային հարցի շրջանակում հատուկ դպրոցների

տնօրենները Խորհրդի նիստում ներկայացրին դպրոցների ներքին կարգապահական կանոնները:

Արտահայտվեցին Հ. Ադամյանը նշեց, որ Խորհրդի նախորդ նիստի արձանագրությունում Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի ներքին կարգապահական կանոնների հաստատման վերաբերյալ արձանագրումը ճշգրտվել է, քանի որ հարցը նախորդ նիստում Խորհրդի քննարկմանը չէր ներկայացվել: Ներքին կարգապահական կանոնները ներկայացվեցին Խորհրդի քննարկմանը՝ սահմանված կարգով դրանց հաստատման նպատակով:

Խորհրդի անդամները քննարկեցին ներկայացված ներքին կարգապահական կանոնները:

Բաց քվեարկությամբ՝ **ԿՈՂՄ՝ 10, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0**:

Որոշեցին Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 3-րդ ենթակետով և N 4 հավելվածով հաստատված «Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 42-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Խորհուրդը

Որոշեց.

1. Հաստատել Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի ներքին կարգապահական կանոնները:
2. Հաստատել Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի ներքին կարգապահական կանոնները:

<u>3-րդ հարցի վերաբերյալ՝</u>

Լսեցին

1. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի տնօրեն՝ Արմինե Բաբայանին
2. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Անի

Գարեգինյանին

3. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս. Դավթյանին
4. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Անահիտ Ենգիբարյանին

Հատուկ դպրոցների տնօրենները ներկայացրին ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգերում կատարված փոփոխությունները՝ պայմանավորված օրինակելի կարգում կատարված փոփոխություններով:

Ներկայացվեց, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի հուլիսի 17-ի N 35-Ն հրամանով փոփոխություններ են կատարվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատված՝ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգում:

Մասնավորապես՝ կարգի 8-րդ կետում «առնվազն երկու անգամ» բառերը փոխարինվել են «առնվազն մեկ անգամ» բառերով, իսկ 22-րդ կետում «Նախնական զինվորական պատրաստություն» բառերը փոխարինվել են ««Նախնական զինվորական պատրաստություն» կամ «Անվտանգ կենսագործունեություն»» բառերով:

Արտահայտվեցին **Հ. Ադամյանը** նշեց, որ հատուկ դպրոցների՝ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգերում կատարված փոփոխությունները նույնաբովանդակ են բոլոր հաստատությունների համար, ուստի առաջարկեց դրանց բովանդակությունը ներկայացնել մեկ անգամ և հաստատել հաստատությունների կարգերում կատարված համապատասխան փոփոխությունները:

Տեղի ունեցավ քննարկում, որից հետո անցկացվեց բաց քվեարկություն: Քվեարկության արդյունքներով՝ **ԿՈՂՄ՝ 10, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0**:

Որոշեցին Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված ուսումնական հաստատությունների համապատասխան օրինակելի կանոնադրություններով՝ Խորհուրդը

Որոշեց.

1. Հաստատել հատուկ դպրոցների՝ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգերում կատարված փոփոխությունները՝ համապատասխանեցված օրինակելի կարգում կատարված փոփոխություններին:
2. Հաստատված կարգերը մինչև 2026 թվականի սեպտեմբերի 11-ը ներկայացնել Խորհրդի նախագահին՝ ստորագրման համար:

<u>4-րդ հարցի վերաբերյալ՝</u>

Լսեցին

1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Անահիտ Ենգիբարյանին
2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի տնօրեն՝ Արմինե Բաբայանին
3. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Անի Գարեգինյանին
4. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս. Դավթյանին

Լսեցին հատուկ դպրոցների տնօրեններին, որոնք ներկայացրեցին հաստատությունների 2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքները՝ նախորդ երկու ուսումնական տարիների համեմատությամբ:

Ներկայացումների ընթացքում անդրադարձ կատարվեց հաստատությունների գործունեության հիմնական արդյունքներին, ուժեղ կողմերին, բացահայտված խնդիրներին և դրանց բարելավման ուղղությամբ նախատեսվող քայլերին:

Արտահայտվեցին

Հ. Ադամյանը նշեց, որ ներքին գնահատման արդյունքները նախապես ուղարկվել են Խորհրդի անդամներին՝ ուսումնասիրության համար, և առաջարկեց քննարկման ընթացքում հիմնական ուշադրությունը դարձնել արձանագրված խնդիրներին և դրանց լուծման ուղղությամբ նախատեսվող քայլերին:

Խորհրդի անդամները քննարկեցին ներկայացված արդյունքները և կարծիքներ փոխանակեցին:

Բաց քվեարկությամբ՝ **ԿՈՂՄ՝ 10, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0**:

Որոշեցին Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 5-րդ ենթակետով և N 4 հավելվածով հաստատված «Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով՝ Խորհուրդը

Որոշեց.

1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի 2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի 2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքներն ընդունել ի գիտություն:
3. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի 2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքներն ընդունել ի գիտություն:
4. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի 2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքներն ընդունել ի գիտություն:

5-րդ հարցի վերաբերյալ՝

Լսեցին Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի տնօրենի Ժ/պ Հ. Առաքելյանին, որը ներկայացրեց կրթահամալիրի 2026–2027 ուսումնական տարվա մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով ընդունելության արդյունքները:
Զեկուցողը ներկայացրեց ընդունված սովորողների թիվը, մասնագիտությունները, ինչպես նաև ընդունելության գործընթացի ընթացքում արձանագրված առանձնահատկությունները և խնդիրները:

Արտահայտվեցին Հ. Ադամյանը նշեց, որ, հաշվի առնելով Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի կողմից մասնագիտական

(արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացումը, կարևոր է, որ Խորհուրդը տեղեկացված լինի նաև կրթահամալիրի գործունեության այս ուղղության վերաբերյալ:

Ա. Մուրադյանը վերահաստատեց իր դիտարկումը՝ կապված մասնագիտական (արհեստագործական) կրթության բաղադրիչին վերաբերող հարցերի՝ Խորհրդի լիազորությունների շրջանակում լինելու հետ:

Միաժամանակ, հաշվի առնելով նիստի սկզբում ներկայացված պարզաբանումը՝ Խորհրդի անդամներն առաջարկեցին լսել Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի 2026–2027 ուսումնական տարվա մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով ընդունելության արդյունքների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը և այն ընդունել ի գիտություն:

Բաց քվեարկությամբ՝ ԿՈՂՄ՝ 10, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0՝ Խորհուրդը

Որոշեց.

Որոշեցին

1. Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի 2026–2027 ուսումնական տարվա մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով ընդունելության արդյունքների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Առաջարկել Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի տնօրինությանը՝ 2026–2027 ուսումնական տարվա մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով ընդունելության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել լիազոր մարմնին:

<u>6-րդ հարցի վերաբերյալ՝</u>

Լսեցին **Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի** տնօրենի Ժ/պ Հ. Առաքելյանին, որը ներկայացրեց կրթահամալիրում ուսանողների ուսման վարձի չափի վերաբերյալ առաջարկությունը:

Զեկուցողը ներկայացրեց առաջարկվող ուսման վարձի չափը և դրա հիմնավորումները՝ անդրադառնալով գումարի ձևավորման հիմքերին և հաշվարկներին, ինչպես նաև ներկայացնելով

տվյալներ այլ ուսումնական հաստատություններում նմանատիպ մասնագիտական կրթական ծրագրերի համար սահմանված ուսման վարձերի վերաբերյալ:

Արտահայտվեցին **Ա. Մուրադյանը** նշեց, որ օրակարգի հաստատման ժամանակ իր կողմից բարձրացված՝ Խորհրդի լիազորություններին վերաբերող վերապահումը վերաբերելի է նաև այս հարցին: Մասնավորապես, նշեց, որ Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի համար սահմանված ուսման վարձերի վերաբերյալ հարցը դուրս է ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությամբ սահմանված կառավարման խորհրդի լիազորությունների շրջանակից:

Հ. Ադամյանը, անդրադառնալով Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով ուսման վարձի չափի վերաբերյալ օրակարգային հարցին, տեղեկացրեց, որ հարցը նախապես քննարկել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Մասնագիտական կրթության և ուսուցման վարչության պետ Գայանե Արզումանյանի հետ: Նա նշեց, որ, հաշվի առնելով, որ Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրը ներկայումս դեռևս չունի հաստատված նոր կանոնադրություն, որով կկարգավորվեն նաև մասնագիտական (արհեստագործական) կրթության բաղադրիչին վերաբերող կառավարման հարցերը, ինչպես նաև այդ բաղադրիչի մասով ձևավորված այլ կառավարման խորհուրդ առկա չէ, նախարարության կողմից առաջարկվել է նշված հարցերն այս փուլում ներկայացնել գործող Խորհրդի քննարկմանը:

Հաշվի առնելով ներկայացված պարզաբանումները՝ առաջարկվեց Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրին ուսման վարձի չափի վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել լիազոր մարմնին:

Բաց քվեարկությամբ՝ **ԿՈՂՄ՝ 10, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0**:

Որոշեցին **Խորհուրդը որոշեց՝**

1. Առաջարկել Հանրապետական N 2 հատուկ

կրթահամալիրին՝ ուսման վարձի չափի վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել լիազոր մարմնին:

<u>7-րդ հարցի վերաբերյալ՝</u>

Լսեցին Քննարկվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 2346-Ա/2 հրամանով հաստատված ժամանակացույցով նախատեսված՝ Երևանի N 17 և Երևանի N 11 հատուկ դպրոցների միավորման և ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներ ունեցող երեխաների հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի վերակազմակերպման հարցը:

Նշվեց, որ Երևանի N 11 հատուկ դպրոցում ներկայումս գիշերում է 42 սովորող, որոնց թվում կան նաև սովորողներ, որոնք դպրոցում մնում են շաբաթ և կիրակի օրերին, ինչը կարող է խոչընդոտել միավորմանը, քանի որ Երևանի N 17 հատուկ դպրոցում ներկայումս գիշերակաց չի կազմակերպվում:

Ներկայացված տեղեկատվությունն ընդունվեց ի գիտություն:

Սպառելով օրակարգը՝ հատուկ դպրոցների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2026 թվականի սեպտեմբերի 4-ի N 3 նիստն ավարտեց աշխատանքը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Հայկուհի Ադամյան

Նիստի քարտուղար՝ Համեստ Փիրումյան

Կառավարման խորհրդի անդամներ՝ Անահիտ Մուրադյան

Սաթենիկ Վարդումյան

Քրիստինա Խաչատրյան

Իրինա Պոնոմարենկո

Աննա Պողոսյան

Մարինե Բաղդասարյան

Լուսինե Կարապետյան

Արմինե Փափազյան

11.09.2026թ.